Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1160-04.05.2011,10.05.2011-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
<<ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ 160-Ն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Բացառություն է կազմում «վաստակավոր մանկավարժի» պատվավոր կոչում ստացած մանկավարժական աշխատողների կամ անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող այն տնօրենների հավաստագրումը, որոնց 61 և ավելի տարին լրանում է մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Նրանց հավաստագրումը իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ընթացակարգով՝ թեստավորման միջոցով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը.	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1.	Լիլիթ Գալստյան Արա Նռանյան Ռուզաննա Առաքելյան	Հոդված 1.	Առաջին նախադասության «վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում» արհատայտությունից հետո լրացնել հետևյալ բառերը՝ «և պետական պարգևներ».	Չի ընդունվել: Հակասում է օրինագծի տրամաբանությանը:
2.	Կարինե Աճեմյան	Հոդված 2.	«հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «հաջորդող օրվանից» բառերով:	Ընդունված է, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 46-րդ հոդվածը